Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 110 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԹՈՒՄՈ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բոլոր մարզերի և շրջանների տարբեր համայնքներում (համայնքների ընտրությունը կատարվում է տվյալ մարզի կամ շրջանի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքում) «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ուսումնական ծրագրեր իրականացնելու նպատակով հարմարությունների ստեղծումն է, և բուն ուսումնական ծրագրի կազմակերպումը: Հարմարությունները կարող են ստեղծվել և՛ առկա շենքային պայմանների վերանորոգմամբ ու բարեկարգմամբ, և՛ նորերի ստեղծմամբ: Հիմնականում գյուղական համայնքներում ստեղծվելու են նաև շարժական համակարգեր (կոնտեյներներից պատրաստված գրասենյակներ): Նախատեսված է նաև համալրել այդ հարմարությունները անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Բարեգործության ստացողներն են՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարբեր բնակավայրերի համայնքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագրի բարեգործներն են՝ Սիմոնյան կրթական հիմնադրամը, Թումո (Սեմ և Սիլվա Սիմոնյաններ) հիմնադրամը և այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք (ոչ առևտրային կազմակերպություններ):
4.	Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01245672)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում՝ կրթական բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է՝ 14,572,256,790 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառուն է՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարբեր բնակավայրերի համայնքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ 1. Հողամասերի, շենքերի, շինությունների ձեռքբերում – 1,135,225,676 դրամ, 2. Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում - 5,676,128,395 դրամ, 3. Շինարարական աշխատանքների նախագծման, չափագրման, տեխնիկական և հեղինակային հսկողության, մասնագիտական խորհրդատվությունների, փորձաքննությունների, փաստագրման և այլ նմանատիպ միջոցառումների իրականացում – 851,419,260 դրամ, 4. Սարքավորումների, արտադրական և տնտեսական գույքի, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում – 2,838,064,198 դրամ, 5. Համագարգչային ծրագրերի արտոնագրերի և լիցենզիաների ձեռքբերում – 567,612,840 դրամ, 6. Գրասենյակային, կոմունալ, փոստային, տպագրական, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 820,000,000 դրամ, 7. Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի (ուսուցանողներ, ուսումնական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 2,400,000,000 դրամ, 8. Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 170,283,852 դրամ, 9. Գործուղման ծախսեր – 113,522,569 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Հողամասերի, շենքերի, շինությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում – 1,135,225,676 դրամ, 2. Շինարարական նյութերի և աշխատանքների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում – 3,973,289,877 դրամ, 3. Շինարարական նյութերի և աշխատանքների ձեռքբերում և ներմուծում օտարերկրյա պետություններից – 1,702,838,518 դրամ,

		4. Շինարարական աշխատանքների նախագծման, չափագրման, տեխնիկական և հեղինակային հսկողության, մասնագիտական խորհրդատվությունների, փորձաքննությունների, փաստագրման և այլ նմանատիպ աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում– 681,135,408 դրամ, 5. Շինարարական աշխատանքների մասնագիտական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում օտարերկրյա պետություններից – 170,283,852 դրամ, 6. Սարքավորումների, արտադրական և տնտեսական գույքի, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում – 567,612,840 դրամ, 7. Սարքավորումների, արտադրական և տնտեսական գույքի, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում օտարերկրյա պետություններից – 2,270,451,358 դրամ, 8. Համակարգչային ծրագրերի արտոնագրերի և լիցենզիաների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում – 113,522,568 դրամ, 9. Համակարգչային ծրագրերի արտոնագրերի և լիցենզիաների ձեռքբերում արտերկրից – 454,090,272 դրամ, 10. Գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռքբերում օտարերկրյա պետություններից - 82,000,000 դրամ, 11. Գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում - 738,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 170,283,852 դրամ, 2. Սարքավորումների, արտադրական և տնտեսական գույքի, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում – 85,141,926 դրամ, 3. Համակարգչային ծրագրերի արտոնագրերի և լիցենզիաների ձեռքբերում – 56,761,284 դրամ, 4. Գրասենյակային, կոմունալ, փոստային, տպագրական, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 82,000,000 դրամ, 5. Գործուղման ծախսեր – 113,522,569 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ:

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ